3.1.6 Լիազորել այլ անձի՝ ԱՇխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած ԱՇխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ ԱՇխատանքի արդյունքը՝ սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 ԱՇխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին սույն պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Սույն պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված ԱՇխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից ԱՇխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ ԱՇխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Սույն պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել ԱՇխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Սույն պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում ԱՇխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Սույն պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում ԱՇխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու սույն պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և սույն պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 ԱՇխատանքների առնվազն ----- տոկոսը կատարել անձամբ, սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաբերքին համապատասխան:

3.4.2 Կատարել Աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում սույն պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է Աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Սույն պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից Աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել Աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Սույն պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով սույն պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել Աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են գալիս թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշիվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Սույն պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված ----- օր (առնվազն 365 օրացուցային օր): Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են գալիս թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշիվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները¹⁸:

3.4.10 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները ներկայացված են սույն պայմանագրի N – Հավելվածում¹⁹:

3.4.11 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

¹⁸ Սույն կետը հանդիսանում է պայմանագրի նախագծից, եթե գնման առարկա հանդիսացող շինարարական ծրագիրը պահանջում է նախագծային փաստաթղթեր:

¹⁹ Սույն կետը հանդիսանում է պայմանագրի նախագծից, եթե կիրառելի չէ:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ավարտի օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է ներկայացնում կատարված Աշխատանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության _____ օրինակ (Հավելված N 4) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 4.1):

4.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե կատարված Աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

1) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները:

2) Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.3 Աշխատանքի կամ սույն պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ քվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.4 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից _____օրյա ժամկետում Կապալառուին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Աշխատանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

4.5 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 4.4 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 4.4 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կապալառուին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 8-ի N 626-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում:

2) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 8-ի N 626-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար:

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 8-ի N 626-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ:

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքները՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքին ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում:

5) մինչև սույն կարգով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքին ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վնարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարածամկետ վնարելու դեպքում՝ վերջին վնարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի 5 տոկոսից:

4.7 Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնիքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքին ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է ----- (-----) ՀՀ դրամ, որից ----- (-----) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, ընդ որում՝

1-ին չափաբաժին (.....) ՀՀ դրամ՝ որից ----- (-----) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:

-

Ո-րդ չափաբաժին (.....) ՀՀ դրամ՝ որից ----- (-----) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:

5.1.1 Պայմանագրի գնից՝ ----- (-----) ՀՀ դրամը, Պատվիրատուն փախանցում է Կապալառուի բանկային հաշվին՝ որպես կանխավճար:

Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վնարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող

(կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է պայմանագրի ընդհանուր գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ²⁰:

5.1.2 Սույն պայմանագիրը կնքվում է ընդհանուր՝ _____ ՀՀ դրամ արժեքով, սակայն քանի որ նախատեսված են ավելի քան միջոցներ, քան պայմանագրի գինն է՝ Աշխատանքի մնացած մասը կկատարվի հաջորդող տարիներին միջոցներ նախատեսվելու դեպքում՝ լրացուցիչ համաձայնագիր կնքվելու միջոցով: Աշխատանքի կատարման համար սովյալ տարվան հաջորդող տարվա ընթացքում միջոցներ չնախատեսվելու դեպքում, այդ մասով պայմանագիրը կլուծվի²¹:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պայմանագրի պատճառ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները սովյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

5.4 Պատվիրատուն վճարում է Աշխատանքի կամ սույն պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ սույն պայմանագրի **4-րդ** բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնաճակատ-ընդունման արձանագրության հիման վրա սույն պայմանագրի **N 3** Հավելվածով՝ վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (երե արձանագրությունը կազմվում է սովյալ ամսվա **20-ից** հետո, ապա վճարումն իրականացվում է **20** բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով սովյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Աշխատանքի դիմաց վճարվելու համար **N 3** Հավելվածով սովյալ ժամանակահատվածում նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան _____ **20** թ.՝ պայմանով, եթե Աշխատանքը կատարված է պատճառ և սույն պայմանագրով սահմանված ժամկետներում կամ Պատվիրատուի համաձայնությամբ՝ ժամկետից շուտ:

5.5 Սույն պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ **ՎԳՏ=ՄԳ/ՆԳ×ԾԳՏ**, որտեղ՝

ՄԳ-ն Պայմանագրի **5.1** կետում նշված գինն է²².

ՆԳ-ն շինարարական ծրագրի նախահաշվային գինն է.

ԾԳՏ-ն նախահաշվով ըստ աշխատանքի տեսակի սահմանված միավոր գինն է.

ՎԳՏ - ծավալաբերք-նախահաշվով սահմանված առանձին տեսակների (տողերի) դիմաց վճարվող գումարն է:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի **1.3** կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

²⁰ Սույն կետը հանվում է պայմանագրի նախագծից, եթե կանխավճարի տրամադրում չի նախատեսվում

²¹ Սույն կետը հանվում է պայմանագրի նախագծից, եթե կիրառելի չէ:

²² Եթե պայմանագրում ներառված են **1-ից** ավելի չափաբաժիններով ներկայացված գնման առարկաներ, ապա **ՄԳ**-ն Պայմանագրի **5.1** կետում նշված՝ համապատասխան չափաբաժնի գինն է:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված ԱՇխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված ԱՇխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Սույն պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից ԱՇխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով²³:

6.4 Սույն պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 5.4 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վնասման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵՎԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, ֆալսական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների բնույթի արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուի ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից հաճախելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի

²³ Պայմանագիրն օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում կատարվել են ֆինանսական միջոցների և կկնքվի համաձայնագիր:

Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

8.2 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Սույն պայմանագրից ծագած՝ կողմի վնասների պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Սույն պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են ֆիննական Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.4 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող Աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.5 Եթե պայմանագիրն իրականացվում է ենթակապալի պայմանագիր կնքելու միջոցով.

1) Կապալառուն պատասխանատվություն է կրում ենթակապալառուի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում ենթակապալառուի փոփոխման դեպքում Կապալառուն գրավոր տեղեկացնում է Պատվիրատուին՝ տրամադրելով ենթակապալի պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հաշված հինգ աշխատանքային օրվա ընթացքում²⁴:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա մասնակիցները կրում են համատեղ և համապարս պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում կոնսորցիումի հետ Պատվիրատուի կնքած պայմանագիրը

²⁴ Սույն կետը հանդիման է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում ենթակապալի պայմանագիր կնքելու միջոցով:

միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները²⁵:

8.7 Առխառանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև սույն պայմանագրով այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Առխառանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև **30** օրացուցային օրով:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով սվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով սվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնիքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքին ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Սույն պայմանագիրը կազմված է _____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի **N 1, N 2, N 3, N 4** և **N 4.1** հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱԹԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

<<Պատվիրատուի հասցեն>>

<<Պատվիրատուի բանկը>>

Հ/Հ -----

(ստորագրություն)

ԿԱՊԱԼԱՌՈՒ

<<Կապալառուի հասցեն>>

<<Կապալառուի բանկը>>

Հ/Հ -----

(ստորագրություն)

²⁵ Սույն կետը հանդիսանում է պայմանագրից, երբ պայմանագիրը չի իրականացվում համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով:

Կ.Տ

Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված թիվ 1

<< >> 20 թ.

կնքված աշխատանքների կատարման

թիվ <<Պայմանագրի ծածկագիրը>> գնման պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ²⁶

<<ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ>> ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

²⁶ Ծավալ արերթ-նախաշիվը կրապարակվում է ներառյալ ըստ աշխատանքների կատարման արժեքների:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

<<Պատվիրատուի հասցեն>>

<<Պատվիրատուի բանկը>>

Հ/Հ -----

(ստորագրություն)

Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

<<Կապալատուի հասցեն>>

<<Կապալատուի բանկը>>

Հ/Հ -----

(ստորագրություն)

Կ.Տ

Հայկելված թիվ 2

<< >> 20 թ.

կնքված աշխատանքների կատարման

թիվ <<Պայմանագրի ծածկագիրը>> գնման պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱԹԻՆ ԳՐԱՖԻԿ

<<ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ>> ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N ը/կ	Կապալատուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը	
		Սկիզբը	Ավարտը
1			
2			
3			
4			
5			
...			
ԸՆԴԱՄԵՆԸ			

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

<<Պատվիրատուի հասցեն>>

<<Պատվիրատուի բանկը>>

Հ/Հ -----

(ստորագրություն)

Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

<<Կապալառուի հասցեն>>

<<Կապալառուի բանկը>>

Հ/Հ -----

(ստորագրություն)

Կ.Տ

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

N	Աշխատանքների անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 20 ք.՝ ըստ ամիսների՝ ընդ որում												
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Հնդամե նը Տարի
1.	<<Աշխատանքների անվանումները>>	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %
2.	<<Աշխատանքների անվանումները>>	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %
3.	<<Աշխատանքների անվանումները>>	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %
...	<<Աշխատանքների անվանումները>>	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %

*Վճարման ենթակա գումարները ներկայացված են տեղական կարգով

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

<<Պատվիրատուի հասցեն>>

<<Պատվիրատուի բանկը>>

Հ/Հ -----

(ստորագրություն)

Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

<<Կապալատուի հասցեն>>

<<Կապալատուի բանկը>>

Հ/Հ -----

(ստորագրություն)

Կ.Տ

Պայմանագրի կողմ

Պատվիրատու

գտնվելու վայրը _____
հհ _____

հվհհ _____

գտնվելու վայրը _____
հհ _____

հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« _____ » « _____ » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ « _____ » « _____ » 20 թ.

Պայմանագրի համարը՝ _____

Պատվիրատուն՝ ի դեմս _____ և

Պայմանագրի կողմը՝ ի դեմս _____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ « _____ » « _____ » 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	Ֆանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վնարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վնարման ժամկետը /ըստ վնարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

ստորագրություն

ազգանուն, անուն

Կ.Տ.

ստորագրություն

ազգանուն, անուն

Կ.Տ.

Հավելված թիվ 4.1

<< _____ >> 20 թ.

կնքված աշխատանքների կատարման

թիվ <<Պայմանագրի ծածկագիրը>> գնման պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և
(Պատվիրատուի անունը)

_____ -ի (այսուհետ՝ Կապալատու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
(Կապալատուի անունը)

գնման պայմանագրի շրջանակներում Կապալատուն 20 թ. _____ -- -ին հանձնման-ընդունման նպատակով

Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
Անվանումը	Քանակական ցուցանիշը (փաստացի)	Չափի միավորը

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

Ընդունեց

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

ազգանուն, անուն

ազգանուն, անուն

ստորագրություն

ստորագրություն

<<---ՇՀԱՇԶԲ---/--->> ծածկագրով

չբջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերի

ՀԱՐՑՈՒՄ

ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի "Գնումների գործընթացի կազմակերպման"
կարգի 47-րդ կետի 1-ին մասով նախատեսված տվյալների հետման մասին

.....-ի կարիքների համար կազմակերպված

պատվիրատուի անվանումը

գնման ընթացակարգի ծածկագիրը

ծածկագրով կազմակերպման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 20..... թվականի-ի N որոշմամբ 1-ին և 2-րդ տեղեր են զբաղեցրել ներֆոհիշյալ մասնակիցները`

N	Մասնակցի		
	անվանումը	հարկ վճարողի հաշվառման համարը	հայտը ներկայացվելու ամիսը, ամսաթիվը, տարեթիվը

Խնդրում ենք ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշմամբ հաստատված "Գնումների գործընթացի կազմակերպման" կարգի 48-րդ կետով սահմանված ժամկետում տրամադրել
էզրակացություն մասնակիցների` նույն կարգի 47-րդ կետի 1-ին մասով նախատեսված տվյալների վերաբերյալ:

..... ծածկագրով գնահատող

հանձնաժողովի քարտուղար

ստորագրություն

..... 20.....

<<---ՇՀԱՇՁԲ---/--->> ծածկագրով

Երջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերի

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի "Գնումների գործընթացի կազմակերպման" կարգի
47-րդ կետի 1-ին մասով նախատեսված հարցման մասին

Գնման ընթացակարգի ծածկագիրը	Պատվիրատուի անվանումը	Մասնակցի								
		անվանումը	հարկ վճարողի հաշվառման համարը	հայտը ներկայացվելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորությունների գումարի չափը/ՀՀ դրամ	հայտը ներկայացվելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը/ՀՀ դրամ				հայտը ներկայացվելուն նախորդող հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների և ակտիվների հաշվապահական հավելեռային արժեքը/ՀՀ դրամ	
									ակտիվներ	պարտավորություն
					20..թ.	20..թ.	20..թ.	Ընդամենը		

Եզրակացությունը տրվել է վարչության աշխատակից-ի կողմից

.....
պատճենայի տնունը, ազգանունը

.....
ստորագրություն

<<---ՇՀԱՇԶԲ---/--->> ծածկագրով

չըջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերի

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ N <<---ՇՀԱՇԶԲ---/--->>

Բ. Երևան

<< _____ >> _____ 20 թ.

<<Հնկերության անվանումը>>, ի դեմս Հնկերության տնօրեն՝ <<Հնկերության տնօրենի անուն ազգանունը, անձնագրային տվյալները>>, որը գործում է Հնկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Հնկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի համաձայնությունը.

1. ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Հաշվի առնելով, որ Հնկերությունը մասնակցում է <<Պատվիրատուի անվանումը>> (այսուհետև՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ <<Գնման առարկայի անվանումը>> ձեռքբերման <<---ՇՀԱՇԶԲ---/--->> ծածկագրով ----- գնման ընթացակարգին և պետք է ներկայացնի պայմանագրի կատարման ապահովում, ուստի սույն ընթացակարգի արդյունքում կնքվելիք գնման պայմանագրի՝ Հնկերության կողմից ժամանակին և ամբողջ ծավալով կատարումն ապահովելու նպատակով Հնկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնությունը, կից ներկայացված վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Հնկերության կողմից՝ համաձայն ՀՀ կենտրոնական բանկի հաստատած՝ <<Վնարահաշվարկային գործառնությունների կատարման ժամանակ կիրառվող փաստաթղթերի նվազագույն վավերապայմանների և դրանց լրացման կանոնների>>:

1.2. Հնկերության կողմից սույն ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը ոչ պատշաճ կատարելու, չկատարելու կամ կատարելուց հրաժարվելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնությունը կից ներկայացված վճարման պահանջագիրը ներկայացնում է Հնկերությանը սպասարկող բանկին՝ վճարելու պահանջագրի մեջ նշված գումարը:

1.3. Պահանջագիրը բանկ ներկայացնելուց հետո տասնօրյա ժամկետում Պատվիրատուին գումարը բանկից անկախ պատճառներով չփոխանցվելու դեպքում, Պատվիրատուն Հնկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱՔՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Տուժանքի սույն համաձայնությունն ուժի մեջ է մտնում Հնկերության կողմից ստորագրման և կնքման պահից և գործում է մինչև Հնկերության կողմից կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:

2.2 Սույն Համաձայնության կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3. Հնկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

Ընկերության անվանումը

Ընկերության հասցեն

Ընկերության բանկի անվանումը

Ընկերության Հ/Հ

Ընկերության ՀՎՀՀ

տնօրեն՝ -----

(ստորագրություն)

գլխ. հաշվապահ՝ -----

(ստորագրություն)

Կ.Տ

ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ N²⁷ "____" _____ 20__ թ.		
Վճարող՝ ՀՎՀՀ -	ԴԵԲԵՏ	ԳՈՒՄԱՐ 000,000.00
Վճարողի բանկը՝		ԿՐԵԴԻՏ ԳՈՒՄԱՐ (ԲԱՌԵՐՈՎ)
Շահառու՝ ՀՎՀՀ -		
Շահառուի բանկը՝	h2.N	
Գումարը բառերով՝		
Գնման գործընթացի ծածկագիրը		
Վճարման նպատակը		
Փաստաթղթերի անվանումը, դրանց համարները, տրամադրման պայմանը		
Կից____ էջ		
Շահառուի ստորագրությունները	Վճարողի ստորագրությունները	
/ _____	/ _____	
/ _____	/ _____	
Կ.Տ.	Կ.Տ.	
Կատարված է շահառուի բանկի կողմից	Կատարված է վճարողի բանկի կողմից	
/ _____	/ _____	
<<__>> _____ 20__ թ.	<<__>> _____ 20__ թ.	
Կ.Տ.	Կ.Տ.	

.....

²⁷ Վճարման պահանջագիրը լրացվում է համաձայն սույն հրավերով սահմանված «Վճարման պահանջագրի պարտադիր փաթեթայնությունների և լրացման կարգի»:

Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանները և լրացման կարգը

Դաշտի համար	<<Վճարման պահանջագիր>> փաստաթղթի վավերապայմանները	Նշված դաշտի/վավերապայմանի առկայությունը փաստաթղթում	Վավերապայմանի լրացման պահանջը
1	2	3	4
1.	վճարման պահանջագրի համարը	պարտադիր	պարտադիր
2.	ներկայացման ամսաթիվը	պարտադիր	պարտադիր, լրացվում է շահառուի կողմից՝ վճարողի բանկին վճարման պահանջագրի ներկայացման օրը
3.	վճարող	պարտադիր	պարտադիր լրացվում է այն անձի (վճարողի) անունը, որի հաշվից պետք է գանձվի պահանջագրով նշված գումարը: Լրացվում է վճարողի անունը, ազգանունը, եթե այն ֆիզիկական անձ է կամ անվանումը, եթե այն իրավաբանական անձ է: Նշվում են նաև այլ տվյալներ՝ ըստ անհրաժեշտության:
4.	վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) անվանումը	պարտադիր	պարտադիր
5.	վճարողի հաշվի համարը	պարտադիր	պարտադիր լրացվում է վճարողի բանկային հաշվի համարը իրեն սպասարկող ֆինանսական կազմակերպությունում (մասնաճյուղի), որից պետք է գանձվի պահանջագրով նշված գումարը:
6.	վճարողի ՀՎՀՀ	պարտադիր	ոչ պարտադիր լրացվում է Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտերով սահմանված դեպքերում, երբ վճարողը հանդիսանում է հաշվառված հարկատու
7.	վճարողի ՀՄՀ	պարտադիր	ոչ պարտադիր լրացվում է Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական

			ակտերով սահմանված դեպքերում, երբ վնասը հանդիսանում է ֆիզիկական անձ
8.	Շահառու	Կարտադիր	Կարտադիր լրացվում է շահառու հանդիսացող անձի (վնասումը ստացողի) անունը, ազգանունը, էթն այն ֆիզիկական անձ է կամ անվանումը, էթն այն իրավաբանական անձ է: Նշվում են նաև այլ տվյալներ՝ ըստ անհրաժեշտության:
9.	Շահառուի ՀՎՀՀ	Կարտադիր	ոչ Կարտադիր լրացվում է Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտերով սահմանված դեպքերում, երբ շահառուն հանդիսանում է հաշվառված հարկատու
10.	Շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) անվանումը	Կարտադիր	Կարտադիր
11.	Շահառուի հաշվի համարը	Կարտադիր	Կարտադիր լրացվում է շահառուի այն բանկային հաշվի համարը, որի վրա պետք է փոխանցվեն վնասողից գանձված միջոցները:
12.	Գումարը (թվերով և բառերով)	Կարտադիր	Կարտադիր լրացվում է շահառուին վնասման ենթակա գումարը
13.	Արժույթը (բառերով և/կամ կոդով)	Կարտադիր	Կարտադիր
14.	Գործարքի նպատակը	Կարտադիր	Կարտադիր
15.	Կայանագրի համարը կամ գնման ընթացակարգի ծածկագիրը	Կարտադիր	Կարտադիր լրացվում է պահանջագրի ներկայացման համար հիմն հանդիսացող կայանագրի համարը կամ գնման ընթացակարգի ծածկագիրը
16.	Վաստադրերի անվանումը, դրանց համարները, տրամադրման պայմանները	Կարտադիր	ոչ Կարտադիր լրացվում է պահանջագրով նշված գումարի գանձման և շահառուին վնասման համար հիմն հանդիսացող վաստադրի տվյալները, որոնց հիման վրա շահառուն վնասման պահանջագիր է ներկայացնում վնասողին սպասարկող բանկին, ինչպես նաև նշվում են

			վնարողին վաստաթղթերի տրամադրման պայմանները (տրամադրում՝ վնարի դիմաց, տրամադրում՝ ակցեպտի դիմաց, տրամադրում՝ երաշխիքի դիմաց և այլն):
17.	առդիր էջերի ֆանակը	պարտադիր	ոչ պարտադիր լրացվում է պահանջագրին կից ներկայացված վաստաթղթերի էջերի ֆանակը, որոնք պետք է տրամադրվեն վնարողին:
18.	վնարողի ստորագրությունը	պարտադիր	ոչ պարտադիր այս դաժտը չի լրացվում, եթե վնարողի և վնարողին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) միջև կնքված պայմանագրով սահմանվել են այն դեպքերը, երբ վնարողը նախապես տալիս է իր համաձայնությունը/լիազորում է ֆինանսական կազմակերպությանը (մասնաճյուղին) կատարել վնարումներ՝ գանձելով այդ գումարը հաշվից:
	վնարողի կնիքը	պարտադիր	ոչ պարտադիր
19.	շահառուի ստորագրությունը	պարտադիր	պարտադիր
	շահառուի կնիքը	պարտադիր	ոչ պարտադիր
20.	շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) աշխատակցի ստորագրությունը	պարտադիր	ոչ պարտադիր
	շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) կնիքը	պարտադիր	չի լրացվում
21.	վնարողին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) աշխատակցի ստորագրությունը	պարտադիր	պարտադիր վնարման պահանջագիրը թղթային եղանակով ներկայացնելու դեպքում
	վնարողին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) կնիքը	պարտադիր	պարտադիր վնարման պահանջագիրը թղթային եղանակով ներկայացնելու դեպքում
22.	վնարողին սպասարկող ֆինանսական կազմակերպության	պարտադիր	պարտադիր այս դաժտը լրացվում է վնարողին սպասարկող ֆինանսական

	(մասնաճյուղի) կողմից ակցեպտավորված գումարը		կազմակերպության (մասնաճյուղի) կողմից, որտեղ նշվում է այն գումարը, որը փաստացի գանձվել է վճարողի հաշվից, ինչպես նաև նշվում է արժույթը
23.	վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) կողմից ակցեպտավորման ամսաթիվը, ժամը, րոպեն	պարտադիր	պարտադիր վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) կողմից պարտադիր նշվում է պահանջագրի ակցեպտավորման ամսաթիվը, ժամը, րոպեն

<<---ՇՀԱՇԶԲ---/--->> ծածկագրով

չըջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերի

ԵՐԱՇԽԻՔ N _____

1. Սույն երաժշիքը (այսուհետ՝ երաժշիք) հանդիսանում _____
է (անունը, ազգանունը կամ անվանումը)

(այսուհետ՝ բենեֆիցիար²⁸) և _____ (այսուհետ՝ պրինցիպալ) միջև
(անունը, ազգանունը կամ անվանումը)

_____ կնքված N _____ պայմանագրից բխող պրինցիպալի
(ամիսը, ամսաթիվը, տարեթիվը) (պայմանագրի համարը)

պարտավորությունների (այսուհետ՝ երաժշտվորված պարտավորություններ) կատարման ապահովում:

2. Երաժշիքով _____ (այսուհետ՝ երաժշիք տվող անձ)
(երաժշիք տվող բանկ, այլ վարկային հաստատություն
կամ ապահովագրական կազմակերպություն)

անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաժշիքով ստանալված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով
(այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել
_____ (_____) _____ (այսուհետ՝
(գումարը՝ թվերով) (գումարը՝ տառերով) (գրամ կամ այլ արժույթ)

երաժշիքի գումար)՝ պահանջն ստանալուց հետո _____ (_____)
(օրերը՝ թվերով) (օրերը՝ տառերով)

աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի

_____ բանկում բացված _____
(բանկի անվանումը) (բանկային հաշվի համարը)

բանկային հաշվին փոխանցման միջոցով:

3. Սույն երաժշիքն անհետկանչելի է:

4. Սույն երաժշիքից բխող բենեֆիցիարի՝ երաժշիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաժշիք
տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաժշիքը գործում է _____ մինչև _____ ներառյալ:
(ամիսը, ամսաթիվը, տարեթիվը) (ամիսը, ամսաթիվը, տարեթիվը)

²⁸ Պետության համար պարտավորություններ առաջացնող գնումների գործարքների դեպքում՝ որպես բենեֆիցիար պետք է նշվի Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը:

6. Բեռնեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաժիշի տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

- 1) _____
- 2) _____
- 3) _____:

7. Երաժիշի տվող անձը բեռնեֆիցիարի կողմից ներկայացված

պահանջը և կից փաստաթղթերն ստանալուց հետո առավելագույնը

_____ (_____)

(օրերը՝ րվերով) (օրերը՝ տոտերով)

աշխատանքային օրվա ընթացքում բնաբրկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաժիշի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Այն դեպքում, երբ բեռնեֆիցիարը ներկայացրել է սույն երաժիշի պայմաններին համապատասխանող պահանջ և կից փաստաթղթեր, իսկ երաժիշի տվող անձը երաժիշիով սահմանված ժամկետում չի վճարում երաժիշի գումարն ամբողջությամբ, ապա բեռնեֆիցիարն իրավունք ունի երաժիշի տվող անձի բանկից պահանջելու երաժիշի տվող անձի հաճվից իրեն վճարել երաժիշի գումարը՝ ներկայացնելով սույն երաժիշի իր օրինակը:

9. Այն դեպքում, երբ բեռնեֆիցիարը ներկայացրել է սույն երաժիշի պայմաններին համապատասխանող պահանջ և կից փաստաթղթեր, իսկ երաժիշի տվող անձը երաժիշիով սահմանված ժամկետում չի վճարում երաժիշի գումարն ամբողջությամբ, այդ րվում՝ երբ բեռնեֆիցիարի կողմից սույն երաժիշի 8-րդ կետում ամրագրված իր իրավունքից օգտվելու դեպքում՝ երաժիշի տվող անձի բանկային հաճվում առկա չեն բավարար միջոցներ, ապա երաժիշի տվող անձը, իր պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար բեռնեֆիցիարին վճարում է տուժանք՝ յուրաքանչյուր ուեացված օրվա համար՝ _____ չափով: Ընդ որում, երաժիշի գումարի վճարման իր պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար երաժիշի տվող անձի պատասխանավորությունը չի սահմանափակվում երաժիշի գումարով:

10. Երաժիշի տվող անձը մերժում է բեռնեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաժիշի պայմաններին:

2) պահանջը ներկայացվել է երաժիշիով սահմանված ժամկետի ավարտից հետո:

11. Երաժիշի տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուե, բան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բեռնեֆիցիարին:

12. Սույն երաժիշի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույրները:

13. Սույն երաժիշի կապակցությամբ ծագող վեները ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Գործադիր տնօրեն _____

Գլխավոր հաճվապահ _____

(ամիսը, ամսաթիվը, տարեթիվը)